

Ոչ բավարար աշխատավարձն ու ժամանակակից գիտական սարքավորումների բացակայությունը նպաստում են «ուղեղների արտահոսքին».

Գ. Վարդանյան

Գիտության ոլորտ եկած շատ երիտասարդներ սոցիալ-տնտեսական պայմաններից և ֆինանսավորման սղությունից ելնելով փնտրում են այլ աշխատանք, այս մասին Tert.am-ի հետ զրույցում ասաց ԳԱԱ երիտասարդ գիտնականների խորհրդի նախագահ Գևորգ Վարդանյանը: Չնայած այս հանգամանքին, Գևորգ Վարդանյանը նշեց, որ վերջին տարիներին գիտության ոլորտում մինչև 35 տարեկան երիտասարդների թիվն աճել է:

«Վերջին տարիներին բավականին ակտիվացել է երիտասարդների ներգրավումը, համենայնդեպս, մինչև 35 տարեկան ասպիրանտների թիվն ավելացել է: Դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով, ինչպես օրինակ՝ երիտասարդ գիտնականների համար մատչելի բնակարանաշինության ծրագրով, որ նախագահի հովանու ներքո իրականացվեց», - ասաց նա: Խոսելով Հայաստանում գիտության ոլորտում երիտասարդ աղջիկների ներգրավվածության մասին՝ Գևորգ Վարդանյանն ասաց, որ կոնկրետ թվեր չի կարող նշել, միայն նշեց, որ նրանք բավականին ակտիվ են գիտության ասպարեզում և դա ունի ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներ:

«Մեր ներկայիս գիտության սուղ ֆինանսական պայմաններում, միգուցե նաև կան որոշակի օբյեկտիվ պատճառներ, քանի որ ընտանիք պահելը հիմնականում ընկած է տղամարդու ուսերին, կարող է այդ իսկ պատճառով տղամարդիկ այլ աշխատանքներ են փնտրում, ինչի արդյունքում կանանց ներգրավվածությունն ավելի մեծ է գիտության ոլորտում», - ասաց Վարդանյանը: Նրա խոսքով՝ շատ երիտասարդ գիտնականներ թեև գիտության ոլորտից չեն հրաժարվում, բայց աշխատանքը շարունակում են արտերկրում անհամեմատ ավելի բարձր վարձատրությամբ: Ուղեղների արտահոսքը Հայաստանից, ըստ նրա, այսօր էլ չի դադարում:

«Ուղեղների արտահոսք միշտ էլ եղել է, ներհոսք էլ կա որոշակի պատճառներով, բայց հիմնականում այդ խնդիրն, իհարկե, ունենք: Դա շատ հուզող, ցավալի խնդիր է և պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Առաջին հերթին սոցիալական է, ոչ բավարար աշխատավարձն է, և ժամանակակից գիտական սարքավորումների բացակայությունը, ենթակառուցվածքների ոչ արդի վիճակը: Որպեսզի գիտնականը կարողանա օրինակ՝ կիրառական գիտությամբ զբաղվել, պետք են ժամանակակից սարքավորումներ, նյութեր և այլն», - ասաց Վարդանյանը:

Նրա խոսքով՝ կան նաև օրինակներ, երբ երիտասարդ գիտնականները դրսում վերապատրաստվում են և վերադառնում Հայաստան՝ շարունակելով իրենց գործունեությունը: «Մասնավոր օրինակ կարող եմ բերել: Համահայկական գիտական համաժողովին, որ երկրորդ տարին անընդմեջ նախագահի հովանու ներքո կազմակերպվում է երիտասարդ գիտնականների աջակցության շրջանակում, մենք հրավիրում ենք հայազգի անվանի գիտնականների: Եվ արդյունքում համագործակցություն է տեղի ունենում, երիտասարդները մեկնեցին մեր հայազգի գիտնականների լաբորատորիաներ: Օրինակ՝ Արտեմ Օգանովի լաբորատորիա մեկնեց մեկ երիտասարդ, վերապատրաստվեց և այսօր ինքը վերադարձել է Հայաստան և հիմնել է իր լաբորատորիան», - ասաց Գևորգ Վարդանյանը:

Երիտասարդ գիտնականի վարձատրությունը, ըստ Վարդանյանի, բավականին ցածր է, բայց կա ակտիվ երիտասարդների մի հատված, որ կարողանում են օգտվել Հայաստանի և արտերկրի դրամաշնորհային ծրագրերից և նրանք միջին աշխատավարձից բարձր են ստանում: Նա նշեց նաև, որ հիմնականում երիտասարդները ներգրավված են բնական և ճշգրիտ գիտությունների ոլորտում՝ ֆիզիկա, կենսաբանություն և այդ է փաստում նաև հեղինակավոր, ազդեցիկ պարբերականներում տպագրվող հոդվածների քանակը: